# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում, ստորև ներկայացնում է ՊԵԿ-ՊԸ-ԾՁԲ-17/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի արդյունքում 2017թ-ի ապրիլի 7-ին կնքված ՊԵԿ-ՊԸ-ԾՁԲ-17/1 ծածկագրով գնման պայմանագրում 2017թ-ի ապրիլի 18-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ դրանով նախատեսված ծառայության մատուցումը իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման նպատակով 18.04.2017թ. կնքվել է համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման համար 2017 թվականին ՀՀ ԿԱ ՊԵԿ արտաբյուջետային միջոցների հաշվին նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 060 544-704:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե**

Համաձայնագիր-1

**07.04.17թ. կնքված N ՊԵԿ-ՊԸ-ԾՁԲ-17/1 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին**

ք. Երևան «18» ապրիլի 2017թ.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա.Սահակյանի մի կողմից, և «Է.Ապրեսյան» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս ընկերության տնօրեն Է.Ապրեսյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 07.04.17թ. կնքված N ՊԵԿ-ՊԸ-ԾՁԲ-17/1 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.3-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**Կողմերը որոշեցին՝**

1.1. Պայմանագրի 7.1 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

1.2. Սահմանել, որ Պատվիրատուն պայմանագրով նախատեսված մատուցված ծառայությունների դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ քան 2017 թվականի դեկտեմբերի 25-ը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| Պատվիրատու | Կատարող |
|---|---|
| ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե | «Է.Ապրեսյան» ՍՊԸ |
| ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 | ք.Վանաձոր, Թամանցիների 14 |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900013202016, 900013574018 | Հ/Հ 2050222004191001 |
| ՀՎՀՀ 02647057 | ՀՎՀՀ 06919097 |
| ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝ | «Է.Ապրեսյան» ՍՊԸ-ի տնօրեն՝ |
| Ա.Սահակյան | Է.Ապրեսյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված
Հաստատված է
«07» ապրիլի 2017թ. կնքված
N ՊԵԿ-ՊԸ-ԾՁԲ-17/1
գնման պայմանագրի փոփոխությամբ

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության անվանումը | Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը* | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 2017թ. արտաբյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | Մինչև 2017 թվականի դեկտեմբերի 25-ը | Ընդամենը Տարի |
| ՀՀ ԿԱ ՊԵԿ Բագրատաշենի և Գոգավան-Պրիվոլնոյեի մաքսային կետերի հողատարածքների և շենքերի չափագրություն | 4241 | | | 700 000 | 700 000 | 700 000 | 700 000 | 700 000 | 700 000 | 700 000 | 700 000 | 700 000 | 700 000 |

* Վճարվող գումարները ներկայացված են աճողական կարգով:

**Պատվիրատու**
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013202016, 900013574018
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝

Ա.Սահակյան
-------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**Կատարող**
«Է.Ապրեսյան» ՍՊԸ
ք.Վանաձոր, Թամանցիների 14
«Ինեկոբանկ» ՓԲԸ

Հ/Հ 2050222004191001
ՀՎՀՀ 06919097
«Է.Ապրեսյան» ՍՊԸ-ի տնօրեն՝

Է.Ապրեսյան
-------------------------
(ստորագրություն)
Կ.Տ